«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Վիրտուալ քարտի դրույթները և պայմանները («Դրույթներ և պայմաններ»)

ԿԱՐԵՎՈՐ. Նախքան Ձեր վիրտուալ քարտը գրանցելն ու օգտագործելը, խնդրում ենք ծանոթանալ Վիրտուալ զարտի սույն Դրույթներին և պայմաններին: Սույն դրույթներն ու պայմանները կիրառվում են ի լրումն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի «Քարտային ծառայությունների տրամադրման պայմանների» և միասին սահմանում են Ձեր Վիրտուալ քարտի տրամադրման և օգտագործման կարգը: Ձեր Վիրտուալ զարտը գրանցելով, ավելացնելով, ակտիվացնելով և օգտագործելով Բջջային Դրամապանակում՝ Դուք ընդունում եք սույն Դրույթներն ու պայմանները:

1. Սահմանումներ

Սույն դրույթներում և պայմաններում ստորև նշված սահմանումներն ունեն հետևյալ նշանակությունը՝

Բանկ, Էյչ-Էս-Բի-Սի կամ մենք՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ:

Սարքի գաղտնաբառ՝ այն ծածկագիրը, որը Դուք օգտագործում եք Իրավասու սարք մուտք գործելու համար:

Իրավասու սարք՝ համապատասխան օպերացիոն համակարգով աշխատող սարք, որը պարունակում է Բջջային դրամապանակ հավելված (այսինքն՝ թույլ է տալիս գրանցել և պահել Վիրտուալ քարտ), սարքերի ցանկը սահմանվում է Բանկի կողմից և ներկայացված է հետևյալ հղմամբ: Բանկն իրավունք ունի ցանկացած պահի և առանց նախնական ծանուցման հանել կամ փոփոխել ցանկում ներառված Իրավասու սարքերի տեսակները կամ մոդելները:

Հեռախոսային օպերատոր՝ անլար ծառայություններ մատուցող ընկերություն, որը տրամադրում է է բջջային կապի ծառայություն:

HSBC

Վիրտուալ քարտ՝ Բանկի կողմից **տրամադրված** ֆիզիկական քարտի (Ֆիզիկական քարտ) թվային համարժեքը, որը պահվում է Ձեր Իրավասու սարքի Բջջային դրամապանակ հավելվածում:

Վիրտուալ քարտով գործարք՝ Վիրտուալ քարտով իրականացվող ցանկացած գործարք:

Բջջային դրամապանակ՝ Իրավասու սարքում ներբեռնված դրամապանակի հավելված, որտեղ պահվում է Ձեր Վիրտուալ քարտը:

Բջջային դրամապանակ տրամադրող՝ Իրավասու սարքի Բջջային դրամապանակ տրամադրող:

«Դուք» կամ «Ձեր» դերանունները՝ Քարտապան

2. Ընդհանուր դրույթներ

(ա) Սույն Դրույթներն ու պայմանները կիրառվում են, երբ Դուք Ձեր Ֆիզիկական քարտն ավելացնում եք Ձեր Իրավասու սարքի Բջջային դրամապանակին: Սույն Դրույթների և պայմանների և Բանկի կողմից սահմանված այլ կիրառելի պայմանների միջև հակասությունների դեպքում գերակայող են համարվում սույն Դրույթներն ու պայմանները:

(բ) Որոշ դեպքերում Ձեզ համար հնարավոր է անհրաժեշտ լինի առանձին պայմաններ համաձայնեցնել Բջջային դրամապանակ տրամադրողի հետ, որոնց միջոցով կկարգավորվեն Վիրտուալ քարտի գրանցման, պահպանման, ինչպես նաև Բջջային դրամապանակի օգտագործմանը (ներառյալ Բջջային դրամապանակ տրամադրողին Ձեր կողմից տրամադրված տվյալների օգտագործման վերաբերյալ) վերաբերող դրույթներ: Բջջային դրամապանակի հավելված տրամադրողի հետ համաձայնեցված այդպիսի առանձին պայմանները, չեն փոփոխում սույն Դրույթները ու պայմանները, ինչպես նաև Քարտային ծառայությունների տրամադրման պայմանները կամ չեն գերակայում դրանցնկատմամբ:

(գ) Նախքան Ձեր Վիրտուալ քարտը Բջջային դրամապանակում ավելացնելը համոզվեք, որ երրորդ անձի վերաբերող որևէ տեղեկատվություն գրանցված չէ Իրավասու սարքում:

3. Գրանցում

(ա) Դուք կարող եք Վիրտուալ քարտն ավելացնել Ձեր Բջջային դրամապանակում՝ հետևելով Բջջային դրամապանակ տրամադրողի հրահանգներին: Բջջային դրամապանակ տրամադրողն իրավունք ունի մերժել Ձեր քարտի ավելացումը կամ կասեցնել, ջնջել կամ վերականգնել Բջջային դրամապանակի հավելվածում գրանցված Վիրտուալ քարտը: Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե Դուք որևէ պատճառով չկարողանաք Վրիտուալ քարտ ավելացնել Բջջային դրամապանակում:

(բ) Գրանցելով Վիրտուալ քարտը Ձեր Բջջային դրամապանակում՝ Դուք համաձայնվում եք, որ Մենք նույնականացման և քարտի ակտիվացման նպատակով հաղորդագրություն ուղարկենք Ձեզ Բանկում գրանցված Ձեր բջջային հեռախոսահամարին: Հավելյալ քարտի գրանցման համար հաղորդագրությունը կուղարկվի Բանկում գրանցված հավելյալ քարտատիրոջ բջջային հեռախոսահամարին: Եթե Մենք չունենք Ձեր բջջային հեռախոսահամարը, կամ չենք կարողանում Ձեզ հաղորդագրություն ուղարկել, Դուք պետք է զանգահարեք Բանկ հաստատման էկրանին նշված հեռախոսահամարով և, հետևելով պահանջվող քայլերին, նույնականացնեք ու ակտիվացնեք Վիրտուալ քարտը:

(գ) Մենք, ժամանակ առ ժամանակ, կարող ենք փոփոխել Իրավասու սարքերի քանակը, որոնցում կարող է ավելացվել միևնույն Քարտը: Խնդրում ենք առաջնորդվել Իրավասու սարքերի քանակի վերաբերյալ կայքում առկա ամենաթարմ տեղեկատվությամբ:

4. Վիրտուալ քարտի օգտագործումը

(ա) Դուք Ձեր Վիրտուալ քարտը կարող եք օգտագործել այն բոլոր վայրերում, որտեղ Բջջային դրամապանակն ընդունվում է վճարումներ կատարելու կամ բանկոմատից կանխիկացում իրականացնելու համար:

(բ) Բանկը Ձեր նկատմամբ պատասխանատվություն չի կրում այն դեպքերում երբ առևտրային կետը հրաժարվում է ընդունել Ձեր Վիրտուալ քարտը:

(գ) Ձեր Վիրտուալ Քարտով գործարքների սահմանաչափերը համապատասխանեցված են Ձեր Ֆիզիկական քարտի սահմանաչափերին:

(դ) Հավելյալ Վիրտուալ քարտերի համար գործում են Ֆիզիկական հավելյալ քարտերի համար սահմանված կանոնները և սկզբունքները:

5. Քարտային հաշիվ

(ա) Ձեր ֆիզիկական և Վիրտուալ քարտերը իրենցից ներկայացնում են միևնույն քարտը և կցված են միևնույն հաշվին:

(բ) Վիրտուալ Քարտով կատարված բոլոր գործարքները կարտացոլվեն Ձեր քարտային քաղվածքում: Դուք Վիրտուալ քարտով կատարված գործարքների համար առանձին քաղվածք չեք ստանա:

(գ) Բջջային դրամապանակի գործարքների պատմությունը ցույց կտա միայն Վիրտուալ քարտի միջոցով իրականացված սահմանափակ քանակով գործարքների վերաբերյալ տեղեկատվություն:

6. Ռիսկի և Ձեր պատասխանատվության ճանաչում

Ձեր Վիրտուալ քարտի, Բջջային դրամապանակի և Իրավասու սարքի օգտագործման ապահովության համար Դուք պարտավոր եք ձեռնարկել անվտանգության որոշակի միջոցներ: Մեր կողմից առաջարկվող անվտանգության միջոցները ներկայացված են Հավելված 1-ում: Ձեր Վիրտուալ քարտի, Իրավասու սարքի, Մոբայլ դրամապանակ հավելվածի գաղտնաբառերը կամ այլ տվյալներ երրորդ անձանց բացահայտելու համար Դուք կրում եք ամբողջական պատասխանատվություն, նույնիսկ եթե բացահայտումը տեղի է ունեցել ոչ միտումնավոր կամ չարտոնված կերպով:

7. Կորուստ, գողություն կամ չարաշահում

Ձեր Վիրտուալ քարտի կորստի, գողության, չարտոնված տիրապետման կամ վերջինով չարտոնված գործարք նկատելու դեպքերում, ինչպես նաև եթե կասկածում եք, որ Ձեր Վիրտուալ քարտի, Իրավասու սարքի կամ Բջջային դրամապանակի տվյալները վտանգված են, անհապաղ կասեցրեք Ձեր Վիրտուալ քարտը: Դուք կարող եք կասեցնել Ձեր Վիրտուալ քարտը ինքնուրույնաբար կամ Բանկի միջոցով՝ կապ հաստատելով մեր շուրջօրյա գործող Հեռախոսային կենտրոնի հետ՝ 060 655 000 հեռախոսահամարով:

8. Մեր պատասխանատվության սահմանափակումը

Մենք պատասխանատվություն չենք կրում Բջջային դրամապանակի, Իրավասու սարքի խափանման համար, ինչպես նաև այն դեպքերի համար, երբ Դուք չեք կարողանում օգտագործել Բջջային դրամապանակը կամ Իրավասու սարքը՝ գործարք կատարելիս: Մենք նաև պատասխանատվություն չենք կրում Բջջային դրամապանակի տրամադրողի կամ որևէ երրորդ անձի գործողությունների կամ անգործության համար, ինչը կարող է ազդել Ձեր Բջջային դրամապանակի օգտագործման վրա:

9. Ձեր անձնական տվյալները

Գրանցելով, ավելացնելով և օգտագործելով Վիրտուալ քարտը Ձեր Բջջային Դրամապանակում՝ Դուք գիտակցում եք, որ քարտային հաշվին առնչվող որոշակի տվյալներ կարող են փոխանցվել և պահպանվել Ձեր Իրավասու սարքում: Նման տեղեկատվությունը կարող է օգտագործվել Բջջային դրամապանակի հավելված տրամադրողի և/կամ Բջջային դրամապանակի հավելված տրամադրողի հետ համագործակցող երրորդ անձանցկողմից: Մենք պատասխանատվություն չենք կրում և չենք վերահսկում Ձեր անձնական տվյալների և Ձեր կողմից Բջջային

դրամապանակ տրամադրողին բացահայտած տեղեկատվության գաղտնիությունն ու անվտանգությունը: Դրանք կարգավորվում են Բջջային դրամապանակ տրամադրողի գաղտնիության քաղաքականությամբ, ինչպես նաև Ձեր և Բջջային դրամապանակ տրամադրողի միջև կնքված որևէ պայմանագրով:

10. Գանձումներ և վճարներ

Բանկը չի կիրառի լրացուցիչ վճարներ և գանձումներ Ձեր Վիրտուալ քարտի կամ Ձեր Վիրտուալ քարտի միջոցով կատարված գործարքների նկատմամբ. Ձեր Ֆիզիկական քարտի գծով սահմանված կիրառելի բոլոր տոկոսները, վճարները և գանձումները, կիրառելի են նաև Վիրտուալ քարտի նկատմամբ:

11. Քարտի դադարեցում

(ա) Ձեր Վիրտուալ քարտը Բջջային դրամապանակից հեռացնելու համար Դուք պետք է հետևեք Բջջային դրամապանակ տրամադրողի հրահանգներին: Վիրտուալ քարտի դադարեցումը չի դադարեցնի Ֆիզիկական քարտի գործողությունը:

(բ) Խարդախության կանխարգելման, քարտի չարտոնված օգտագործման կասկածի ինչպես նաև Քարտային ծառայությունների տրամադրման պայմաններով սահմանված այլ դեպքերում, Մենք իրավունք ունենք կասեցնել կամ ջնջել Ձեր Վիրտուալ Քարտը՝ Ձեզ ծանուցելով այդ մասին:

(գ) Ձեր Ֆիզիկական քարտի կասեցումը, ոչնչացումը կամ վերականգնումը ինքնաբերաբար չի ենթադրում Ձեր Վիրտուալ Քարտի կասեցում, ջնջում կամ վերականգնում:

(դ) Մենք նաև իրավունք ունենք կասեցնել, ջնջել կամ վերականգնել Ձեր Վիրտուալ քարտի օգտագործումը, եթե Ձեր Բջջային դրամապանակի հավելվածը որևէ պատճառով կասեցվել, ջնջվել կամ վերականգնվել է Բջջային դրամապանակ տրամադրողի կողմից:

12. Ծանուցումներ

Անվտանգության և այլ նկատառումներից ելնելով՝ Մենք պարբերաբար կարող ենք փոփոխություններ կատարել Վիրտուալ քարտի օգտագործման կանոններում և սույն Դրույթներում և պայմաններում՝ թարմացնելով Մեր պաշտոնական կայքը և / կամ ուղարկելով Ձեզ համապատասխան ծանուցում օրենքով սահմանված կամ Բանկի և Ձեր միջև համաձայնեցված կարգով:

13. Կիրառելի օրենք, ընդդատություն և տարբերակ

Սույն Դրույթներն ու պայմանները կազմված և մեկնաբանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Սույն փաստաթղթով նախատեսված ծառայությունների կապակցությամբ սույն Դրույթներով և Պայմաններով, ինչպես նաև Քարտային ծառայությունների տրամադրման պայմաններով չկարգավորվող ցանկացած հարաբերություն կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ.օրենսդրությամբ համապատասխան դրույթ նախատեսված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով: Բանկի և հաճախորդի միջև ծագած ցանկացած վեճ ենթակա է ՀՀ դատարանների իրավասությանը: Սույն Դրույթներն ու պայմանները կազմված են անգլերեն և հայերեն լեզուներով: Սույն փաստաթղթի հայերեն և անգլերեն տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում գերակայող է համարվում հայերեն տարբերակը:

14. Բողոքներ

Եթե ունեք հարցեր կամ բողոքներ Ձեր Վիրտուալ քարտի հետ կապված, խնդրում ենք դիմել Մեր Հեռախոսային կենտրոն, ցանկացած մասնաճյուղ կամ այցելել Բանկի պաշտոնական կայք www.hsbc.am:

Եթե Ձեր հարցը կամ բողոքը վերաբերում է Բջջային դրամապանակին, խնդրում ենք կապ հաստատել Բջջային դրամապանակ տրամադրողի հետ վերջինիս կողմից տրամադրված կոնտակտային տվյալներով:

Վիրտուալ և Ֆիզիկական քարտերով կատարված գործարքների բողոքարկման կարգերը նույնական են:

Հավելված 1

Բանկի կողմից առաջարկվող անվտանգության միջոցները՝

- Ձեռնարկեք ողջամիտ նախազգուշական միջոցներ՝ Ֆիզիկական և Վիրտուալ քարտերի, Բջջային դրամապանակի և Իրավասու սարքի տվյալները (ներառյալ Ձեր Իրավասու սարքի ծածկագիրը, մատնահետքը, ինչպես նաև Իրավասու սարքում և/կամ ամպային պահպանման ցանկացած հարթակում պահվող այլ կենսաչափական տվյալներ) ապահով պահելու համար՝ կորուստը, գողությունը կամ զեղծարարությամբ օգտագործումը կանխելու նպատակով:
- Ուշադիր եղեք Ձեր Բջջային դրամապանակի և Իրավասու սարքի նկատմամբ և միշտ պահեք դրանք Ձեր անձնական հսկողության ներքո:

- Թույլ մի տվեք երրորդ անձանց օգտագործել կամ մուտք գործել Ձեր Իրավասու սարք և Բջջային դրամապանակ:
- Մի պահեք երրորդ անձանց մատնահետքը կամ կենսաչափական տվյալները Ձեր Իրավասու սարքում:
- Մի ընտրեք հեշտ կռահելի թվեր որպես Իրավասու սարքի գաղտնաբառ (օրինակ՝ ծննդյան ամսաթիվը, հեռախոսահամարը, միևնույն թվանշաններ կամ այլ թվեր, որոնք կարելի է հեշտությամբ գուշակել), երրորդ անձանց մի հայտնեք Ձեր Իրավասու սարքի գաղտնաբառը, գրի մի առեք այն կամ մի պահեք Ձեր Իրավասու սարքի մոտակայքում:
- Մի ներբեռնեք կամ գործարկեք Բջջային դրամապանակ հավելվածը կոտրված, կեղծ կամ չատրոնված հավելվածներով գործարկվող բջջային հեռախոսում/սարքերում կամ այնպիսիններում, որոնցու ծրագրային ապահովման արգելափակումը վերացվել է («jailbroken» կամ «rooted»):
- Պարբերաբար փոխեք Սարքի գաղտնաբառը և օգտագործեք Սարքի գաղտնաբառի թվաայբբենական ծածկագիր.
- Ջնջեք Վիրտուալ քարտը Բջջային դրամապանակի հավելվածից՝ նախքան Իրավասու սարքի օգտագործման ավարտը, օրինակ՝ վաճառքի կամ երրորդ անձի տրամադրելու ժամանակ (ներառյալ ժամանակավոր օրինակ՝ այն վերանորոգելու նպատակով):
- Հեռացրեք Վիրտուալ քարտը Բջջային դրամապանակից Ձեր Վիրտուալ քարտի դադարեցումից հետո, ինչպես նկարագրված է 11-րդ կետում: